

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտոնային համար Տարեկան 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Արտատպարանի համար (երկու քիչը մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
ԿԱՆՈՒՆԻ ՎՃԱՐՆԷԼԻ

Համակ դրամ եռայն դրկի հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուլկարիա)
Редакция на вѣст. Редакция du journal
„Иравункъ“ „Iravounk“
ВАРНА (България). VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն ընդունիր եւ յարմար դատաւար-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Ծանուցեալն տողը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ՍԱՐԴՈՐՍՆԵՐ

Իրաւունքի բոլոր ընթերցող-
ները անշուշտ խորին վիշտով կար-
գացին մեր վերջին թիւերով հրա-
տարակուած այն մի քանի տխուր
լուրերը, որոնք թուրքին ու քիւր-
տին եւրոպական տպագրութեան
որոշումներուն մէջ մասին իսպառ-
կորուած դատաւարութեան լինելն
կը գուժէին: Անցեալ չարթու մեր
մէջ թիւով նկարագրած էինք Գեր-
մանիա փոխադրուած իստուրի չափ
որբերուն տարաբաղդ վիճակը.
մեր նախորդ թիւով հաղորդեցինք
ընթերցողաց 21 դեռատի աղջիկ-
ներու Մարտիրոս տարուելու վաճա-
քերու մէջ փակուիլն. նաեւ մեր
Քէօստէնէի թղթակցին նամակը
նկարագրեց մեզ տեղւոյն «Գերմա-
նո-Հայկական» անուամբ միասնա-
րական վարժարանին մէջ օտարա-
նալու գաղտնագրութեան 40ի չափ
հայ մանուկներու կացութիւնը:
Այս ամենը կը կատարուին յա-
նուն մարդասիրութեան, յանուն քա-
ղաքակրթութեան և յանուն քրիս-
տոնական վարդապետութեան:

Մարդասիրութեան, քաղաքա-
կրթութեան ու քրիստոնէական
կրօնքի պաշտելի և վնճ սկզբունք-
ները, որ կոչուած ունին հանուր
մարդկութեան խարխալը բարձ-
րացնելու վայրենութեան, բար-
բարութեան ու յափշտակու-
թեան տիպէն, կուգան այսօր ի-
րենք գլորել տիպերու ճախճախու-
տին մէջ կրօնի վարդապետներու ու
գաղտնագրութեան ձեռքով: Անկ-
հաղնիւրուն բարութիւն ու զըթու-
թիւն քորողող Նազարեցիի այդ
պարկեշտ () պաշտօնեաները մէկ
ձեռքով քաղաքակրթութեան աշխարհի
զթուտ սրտերէն վարդեր կը քա-
ղեն իսկ միւսովը մանուշակներ
կը ճմլեն ու գարատաններ կը
խամբեցնեն. Նազարեցիին կը պա-
տուիրէ անոնց ձրի առածներն ձրի
տալ. անոնք ամենաթանկ գնով զը-
թութիւնը կը վաճառեն, ածուրթի
կը դնեն. Լուսերի աշակերտները
պապական պատուիրակներու հետ
մրցումի մտած են, ոչ թէ իրենց
իսկական կոչումը նուիրագործելու

այլ յայտնապէս այդ կոչման դա-
ւաճանելու. հաց կուտան հոգւոյն
տիրանալու գնով, ծնողքը կը հա-
գուցնեն՝ զաւակը անոր զրկէն
յափշտակելու նպատակաւ: Օգ-
նութեան հասնելու համար զըր-
կուած այդ պաշտօնեաները թուրք
և քիւրտ աւարառուներու թողած
կամ անոնց չի կրցած յափշտակած
ամենաթանկագին առարկաներն է
որ կը կողոպտեն, կը խլեն և կը
տանին անդառնալի կերպով: Ահա
երկրորդ անգամ մերն է որ կը տա-
րածուի Մայր Հայրենիքի վրայ,
հայրութեան վրայ: Քիւրտը խնա-
յած էր գոնէ մեր մանուկներուն,
բայց կրօնի ուսուցիչները անոնց
ալ չեն խնայիր, անոնցմէ երա-
մակներ կազմելով կուռնեն կը տա-
նին Գերմանիա, ազգութեամբ կոր-
սնցնելու հաճար, կը տանին Գաղղիա
վանքերու մէջ փակելու համար, ուր
ազգային և ընտանեկան տեսակէ-
տով կորսուելէ զատ մտաւորապէս
եւս կը դիականան:

Մարտիրոս վանքերուն մէջ փակ-
ւող այն 21 հայ աղջիկները տես-
նելու համար եթէ քանի մը տարի
վնճ այցելելիք իրենց մենաստան-
ները, գիտէ՞ք զանոնք ինչ վի-
ճակի մէջ պիտի գտնենք: Այս
չատ պարզ է. զանոնք պիտի տես-
նենք դալկադէմ, կորովէ ու արթ-
նութենէ զուրկ, ազատ խորհի-
լու և ազատ խօսելու բնական ըզ-
գացումէն բոլորովին հեռու, ան-
բնական և վերացական գաղափար-
ներով միտքերնին բեռնաւորուած,
անոնք միայն մեծաւորի մը կամ
մայրապետի մը մարդկային ազատու-
թիւնը կապտող հրահանգներուն
հետքէն ենթակայ: Աւա՛ղ, անոնց
այս վիճակ արգահատելի պիտի
գտնենք քան այն լեռնական հով-
ուհիները, որ թէեւ մտային զարգա-
ցումէ բւարտովին զուրկ, բայց բը-
նութենէն յատկացեալ բոլոր պարտ-
քերը գործադրելու տրամադիր,
իր ծնողքին ու իր ազգին զաւակն
է միշտ և իր կամքին ու իր զգացու-
ազատ տէրն է:

Իսկ օտար բողբոջական միսիո-
նարաց ձեռքով Գերմանիա և այլ-
ուր զրկուած անչափահաս մանուկ-
ները քիչ ժամանակի մէջ ազգային

և տոհմային ամեն յատկանիշէ
զրկուելէ և ըստ ամենայնի օտա-
րանալէ վերջ, եթէ բաղդի բեր-
մամբ յաջողին մէյ մէկ փիլիսոփայ
ալ ըլլալ, կրկին կորսուած են ա-
նոնք ազգային տեսակէտով, ալ
ոչինչ կարծեն իրենց զերդաստա-
նին ու ընտանիքին համար. այո՛,
թերեւս օտար դարաստաններու
մէջ անոնցմէ ոմանք վարդեր ու
զարդեր ըլլան, բայց մեղ ի՛նչ օ-
գուտ. չէ՞ մի որ մեր դարաստանի
սա կանանչ տերեւը օտարի վար-
դէն մեզ աւելի նախամեծար է,
որովհետեւ սա մերն է, իսկ օ-
տարինը միշտ օտար է:

Այսպէս ահա այսօր Հայրութիւնը
լուրջ կերպով յարձակում կը կրէ
նոր թշնամիներէ, որոնք զառնազ-
գեստ գալլեր են, որք մարդասի-
րութեան, քաղաքակրթութեան և
քրիստոնէութեան նուիրական ա-
նունքներով մեզ կը մօտենան, բայց
օձի պէս կը թռնաւորեն և գա-
լերու պէս կը յափշտակեն ու կը
տանին անդառնալի կերպով մեր
մանուկները, միակ մեր միսիթա-
րութիւնը և ազգին ապագայ յու-
սոյ խարխալը:

Այս նոր յարձակողները այնչափ
վտանգաւոր են մեզ որչափ քիւր-
տը, ասոնց տուած հարուածները
աւելի անդարմանելի են քան թըր-
քական սուլիներուն մեր մարմնոց
վրայ բացած վէրքերը, որոնք ժա-
մանակի հողովմամբ մը բուժին:

Հետեւաբար հայ ժողովրդի հա-
մար ինքնապաշտպանութեան ժա-
ւեր հասած է կրկին այս օտարա-
մուտ նոր թշնամիներու գէմ, որոնց
զօրավիճ եղած է մայր Հայրենիքի
մէջ տիրող սովը: Սովին եւ թըր-
ուառութեան գէմ մաքառելով ար-
դէն մարդ որսացող մեր թշնամի-
ները ուժասպառ ըրած կըլլանք:
Արտասահմանի ամէն հայ անհատ
ըստ իր կարի պարտի սատարել
հացի կարօտ մեր եղբայրներուն, ո-
րոնք այդ անհրաժեշտ պէտքէն
մղեալ կրօնափոխութեան կը դիմեն
և իրենց հոգեհաստօր զաւակները
օտարաց կը յանձնեն: Արտասահ-
յանի ամենէ տկար և պանդուխտ
հայը պարտի գոնէ միսիթարական
նամակներով խրատելու քաջալիրել
հայրենիքի մէջ գտնուող իր ծնող-

քըն ու ազգականները և զգուշա-
ցնել զանոնք օտար կրօնաւորներու
մարդոտութեան թակարդներէն:

Թ. Գ.

ԹՂԹԱՍՏՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրիա, մարտ 6/12

Վերջապէս Գահիրէի Գաւառա-
կան Երեսփոխանական Ժողովոյ
նիստը տեղի ունեցաւ. նիստ մը
որ պէտք է խոստովանիլ թէ բա-
ւական արդիւնաւոր եղաւ:

Ամենէն առաջ նկատողութեան
առնուած էին Գահիրէի և Աղէք-
սանդրիոյ ազգայիններու կողմէ
Առաջնորդական ծանօթ խնդրոյն
առթիւ տրուած հանրագրութիւն-
ները, որոնք սպասուած տպաւո-
րութիւնը առաջ բերած են և ին-
քիւրը որոշուած է յառաջիկայ ե-
րեսփոխանական Ժողովոյ նիստին
ընեն, որ աշունէ առաջ տեղի չը
կրնար ունենալ: Ամառան եղանա-
կը այս տեղ ամեն բանի համար
սեղան մօտք ըլլալուն պատճառաւ:

Որ և է գործ մը՝ ըլլայ հանրա-
յին, ըլլայ անհատական, ա-
նոր ազգէկ կամ գէջ կար-
գադրութիւնը մեծ մասամբ կա-
խում ունի զայն իրենց ձեռքին
մէջը ունեցողներուն մտաւորական
և բարոյական ուժէն:

Ճիշդ ալ այսպէս էր Գահիրէի
նախորդ քաղ. Ժողովոյ գործը, զոր
վերջնականապէս հրաժարեցուցին.
որոնք վեց ու կէս տարիէ ի վեր
անընդհատ կը պաշտօնավարէին,
անոնց վեցամեայ գործառնութեան
չնորհիւ այնչափ խառնակ վիճակ
մը ստացան տեղական ազգային
գործերը:

Այս տիպար քաղաքական Ժո-
ղովը թերեւս քանի մը տարիներ
եւս պաշտօնավարէր եթէ վերջերս
վրան քաղ. օրինական զեղծում մը
տեղի չունենար, զեղծում մը ո-
րուն Պատրիարքարան և Տէր Օր-
մանեան զիտակցաբար մեղաւիճ
եղած են. այն է թէ առանց Գա-
ւառական երեսփոխանական Ժողո-
վոյ սրտման և Առաջնորդական
Տեղապահ Սրբազան հօր գիտու-
թեան յանդգնած էին Պատրիար-

քարանին Առաջնորդական նոր ընտ. բաժան մը հրահանգը ուղիւ Պատրիարքարանը այս ապօրինի դիմումին փութով պատասխանած է իր հրահանգները խրկելով :

Ահաւասիկ վերոգրեալ պարագան կուգայ մեծկակ ապօրոյց մըն ալ տալ այն ձգտումներուն համար որ Պատրիարքարանը ունի և ունեցած է օրինական և թե. րեւս ալ ամեն կերպ զեղծումներու համար :

Բայց ուրիշալի է մեզ իրաւաբանական համար որ նոր ընտ. բաժան քաղաքական ժողովէն շատ գնահատելի հեռատեսութեամբ բոլորովին դուրս նետած են մէկ երկու հոգի մանաւանդ մէկը որ վերջերս իր երկդիմութեան արդարացի վերջը առաւ ամենուն արհամարանքին արժանանալով : Այս մասին շնորհաւորելի են Գաւառական երեսփոխանական ժողովոյ Պատ. անդամք և Տեղապահ Սըրբաղան հայրը :

Գաւառական ժողովը երեսփոխաններէ ոմանց պահանջին համեմատ նախորդ քաղաքական ժողովոյ անդամներէ մէկ քանին խիստ զիտորութիւններ ուղղեց և հրապարակաւ ցաւ յայտնեց ոմանց ապօրինի ընթացքին համար, ինչպիսի նաեւ Պատրիարքարանի :

Նոր ընտրուած Քաղ. ժողովը որ իրեն ատենապետ ունի Զէնոբ պէյ Մէրհաթէթեան, լուրջ մարմին մը լըլալ կը խոստանայ :

Արեւմտեան թաղ. խորհուրդն ալ իր կարգին շատ կանոնաւոր մարմին մը չէր : Այս ալ բանական տարիներէ իվեր չըլան :

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅ ԳՈՒՄԱՐՆԵՐ
ԴՈՒՍԱԶՈՅ ՄԵՋ

Գրականութիւնն եւ մանաւանդ անոր մասնագիտական ճիւղերը, միշտ պէտք ունին հանրական քաջալերութեան : Մեր մէջը դեռ շատ հազուադէպ են այնպիսի գրագէտներ որոնք մի միայն իրենց գրչին արդիւնքով կարենան փոքր ի շատէ ապահով ապրուստ ունենալ : Այս պարագան զգալի է մանաւանդ մասնագիտական գրականներով պարագայը գրողներուն համար, որոնք նոյն իսկ մեղմ անհամեմատ աւելի զարգացած եւ հարուստ ազգերուն մէջ ալ միշտ կարօտ են եղած եւ են՝ կողմնակի նիւթական միջոցներու : Հաւեմաւարաբար լաւագոյն վիճակ ունին օտարազգիներ եւ մասամբ ալ վիպական գրողներուն հետ : Գրականները՝ վասն զի ասոնք ընթերցողներու աւելի մեծ չըլան ունին կամ իրենց գրողներն կը գտնեն : Մեր պարբերական մամուլը՝ դեռ եւս կը շանտաւորէ ամբողջ իր մէջ արդի գրականութեան ամենամեծ արդիւնաբերութիւնը եթէ կրնանք այս բառը գործածել ներկայ դէպքին մէջ. օրագրական շրջանէն դուրս չգտնել գրագէտներ ունինք՝ ժողովրդական ընթերցանութեան նիւթ տուող, եւ նոյն իսկ այս քիչին ալ մի միայն մատենագրական ճիւղին չեն նը-

ներ կը բոլորէր և մինչեւ ցարդ կանոնաւոր վիճակի մը չէր հասնուցած իր գործառնութիւնները : Այս անգամ Պօղոս բաշա Նուպար, որ ատենապետն էր Արեւմտեան թաղ. խորհուրդին, թէեւ հեռուէ, տեսնելով որ քաղաքիս ազգային գործերը նախանձելի ուղղութիւն մը չունին, ինք պարտաւորեց անդամները իրենց հրաժարականը տալու իրն ալ անոնց միացնելով :

Պօղոս փաշա Նուպար այժմ միացած Տեղապահ Սըրբաղան հօր հետ կաշխատի ընտրելեաց ցանկ մը պատրաստել նոր թաղական խորհրդոյ մը ընտրութեան համար : Նորին վսեմութեան այս գովելի ձեռնարկութիւնը և ջանքը ամբողջ Արեւմտեան թաղ. խորհուրդէն վաղուց ձանձրացած ըլլալուն համար :

Չը մոռնամ նաեւ յիշել թէ խմբակ մը կար հոս որ թաղ. խորհրդոյ անդամներէն ոմանց բարեմտութիւնը գործիք ըրած ուղածին պէս խաղալու եղած էր. հիմայ այդ խմբակ մտմտութիւն թարկուած է :

Ի նպաստ վաւարականի սովորեց հանգանակութեան մը ձեռնարկուեցաւ, թէ հոս և թէ Գահիրէ, Պօղոս փաշա Նուպար 100 անգլիական ոսկի իսկ Տիգրան փաշա Ապրո 50 անգլ. ոսկի ստորագրած են. կը յուսացուի որ քիչ օրէն 5-600 ոսկիի գումար մը խըրկուի վան :

Առ այժմ այս տեղ ամեն կիրք և կուսակցական կռիւ հանդարտած, ամենքը հանրային գործը-

չուրջը դառնալ կը թուին, իցիւ թէ տեւական ըլլար :

ՄԱՓՓԻ

ԱՐՓԻԱՐ ԴԱՒԱՃԱՆ ՄԸ ԶԷ՝

Չորեքշաբթի իրիկուն «Հայկական կրթարան»ի ինպաստ կատարուած թատերական ներկայացումին հանդիսատես ըլլալու առիթն ունեցայ. միջնաբերդներու ատեն ինչպէս ուրիշ հանդիսականներ նոյնպէս և ես սիկար ծխելու և մի քիչ զովանալու համար դրսի սրահը ելնելով կը շրջագայէի. հոն, սրահին ճիւղ կեդրոնը քանի մը անձեր յոռեկայս կը խօսակցէին բարձրաձայն. յանկարծ այդ խօսակցութեան մէջ ականջիս զարկաւ Արփիարի անունը և ուշադրութիւն ըրի. միջհասակ մէկը, կարճահասակ չըսելու համար, հեգնական եղանակաւ և չարամիտ ժպիտով մը «Արփիար էֆէնտի է ասում եմ, բայց չեմ ասում թէ բոլոր Արփիարներն էֆէնտիներ են» կըսէր. և յայտնի էր թէ այս խօսքերը բաւական մարդոց վերստին լսել տալ կրնալուն համար սրտի գոհունակութիւն մը կը զգար : Այդ խօսքը արտասանող պարոնը Շար. ժուռի տէր-տնօրէն խմբագիրն էր, որ երկար ամիսներ իր թերթով Արփիարի գաւառն մը ըլլալը ապացուցանել և կամ ժողովուրդին կընցնել տալ ջանաց, բայց որոշ ապացոյց մը կամ փաստ մը չը կրնալով մէջ տեղ դնել պարտաւոր ձայնը կտրած էր : Սակայն ցաւալի է որ իր և իրեններուն հրապարակաւ հաստատել չի կրցած

ամբաստանութիւնը, ալսօր կրկին, գտնէ բերանացի կերպով, կամ աւելի լաւ է ըսել պառաւ կրկինբուրա տուել լսանքսանքով մը, կը շարունակէ խօսիլ ու տարածայնել :

Անցեալ տարի պուլկարահայ մամուլը այդ խնդրով ամիսներով զբաղեցաւ և ամբաստանութիւնը առանց փաստի մնաց : Ահա քանի մը ամիսներէ ի վեր ալ Ամերիկայի Տիգրիս թերթը Արփիարի մասին թեր ու գէժ յօդուածներ ու նամակներ կը հրատարակէ ու գեռ ու է փաստ մէջ տեղ բերող մը չի տեսնուեցաւ. և նոյն թերթի խմբագրութիւնը վերջին 69 (թ. տարի) թիւին իր վճիռը հետեւեալ կերպով արձակեց.

«Ինչպէս որ ըսած ենք ժամանակին՝ մենք Արփիարը չենք ճանչնար, և ոչ ալ անոր դատին փաստարան լինելու հաւանութիւնն ունինք, արդարութիւնն է միայն որ կը մղէ մեզ գրել մեր համոզումները, որք գոյացած են թէ Տիգրիսի և թէ եւրոպական հայ թերթերու մէջ այս մասին՝ հրատարակուած նամակներէ : Մենք չենք գիտեր թէ Արփիար գաւառն է. ամբաստանողներն ալ չը կըցին զայն ապացուցանել, կամ լաւ եւս՝ փախուստ տուին հրապարակ գալէ : Չի դատապարտուած ամբաստանեալը անմիջ մըն է օրէնքի առջեւ, իսկ այս ամբաստանելոյն դատը աւելի զօրաւոր է, վասն զի՝ հակառակ ընդհանուր սովորութեան՝ ամբաստանողը մէջ տեղ չըլան տակաւին. ուրեմն հետեւելով օրէնքներուն՝ պարտաւոր ենք պատասխանել մեր հին հարցմանց ըսելով թէ :

որ փոքր ի շատէ երաշխաւորութիւն կընծայէ տեսականութեան : Գալով բուն օգնութեան եղանակին, այս՝ նպաստի գործը՝ պէտք է ամփոփէր հետեւեալ երէք կէտերը :

Ա. Բարեօքի հեղինակաց կամ անհատական գրական անձանց անտեսական վիճակը՝ գրական միջոցներ տալով իրենց, միանուագ կամ որոշ թուական ձեւով :

Բ. Յատկացնել անձեռնմխելի գումարներ՝ մատենագրութեան որ եւ է ճիւղին վերաբերեալ գրուածքի մը երեւալուն ոյժ տալու համար :

Գ. Գնել և սեպհական միջոցներով հրատարակել՝ այն գրագէտներու գործունեւներն, որոնք կարօտ են նիւթական օգնութեան :

Այս երէք կէտերն ալ գործադրուելու համար՝ հարկաւոր էր կանոնադրապէս կազմակերպուած հասարակական օգնութիւն. իսկ այդ օգնութիւնն ապահովելու համար հարկաւոր էր յատուկ «նպաստամատոյց գումարներ» : Այսպիսով «նպաստամատոյց գումարներ» վերջին տարիներս՝ կամ մասնաւոր անձանց նուիրատուութեամբ եւ կամ հասարակական հաստատութեան մը միջոցներով արդէն սկսած են երեւան գալ ասպարէզի վրայ, եւ գործադրութիւն առնուլ Ռուսահայոց մէջ : Ահա անոնցմէ զըլ-խաւորներէն մին.

«Աթուղեանց-Նազարեանց Գրականական Ֆոնդ» : (*)

(*) Ֆոնդ — կը նշանակէ հիմնական գումար :

1892ին Մոսկուայի հայ հասարակութիւնը տօնեց ծանօթ հայ մանկավարժ եւ քերթող Սմբատ Եփեսոսի զրական գործունէութեան յօդուածներ, եւ ի պատիւ նոյն տօնախմբութեան ժողովարարութեամբ հանդեսակուեցաւ 7,000 (եօթն հազար) ռուբլի չափ գումար մը : Նուիրատուներուն նպատակն էր՝ այս գումարով հիմ դնել գրամատչելի մը, որ ազգային հաստատութեան մը ձեռք գործադրուելով իր անոնիքով նիւթական նպաստ հասցնէ հայ կարօտեալ գրագէտներուն : Այս նպատակի համար ալ միջնորդութիւն եղաւ կառավարութեան առջեւ յատուկ ընկերութիւն մը կազմելու : Գաղափարը նոր չէր. թէ՛ Մոսկուայի եւ թէ՛ Տիգրիսի գրական շրջաններուն մէջ ջանքեր կը կատարուէին այն ուղղութեամբ, որ օր յօրով որոշ կազմակերպութիւն մ'առնուէր : Սակայն չորս տարի անցաւ յօդուածներէն օրէն, եւ դեռ ոչ մի ընկերութիւն կրցաւ կազմուիլ, կամ մասնաւորապէս իշխանութեան կողմէն հաստատութիւն գտնել. եւ այսպէս՝ վերոյիշեալ գումարը կը մնար անբեր, առանց գործադրութեան : Այն միջոցին՝ այսինքն 1896 Դեկտեմբերի 11ին, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան խորհուրդն՝ նկատելով, որ այն ջանքերն ի դուր կանչելին թէ՛ հիւսիս եւ թէ՛ հարաւ, եւ միւս՝ կողմէն՝ Բարեգ. Ընկերութիւնն իր կանոնադրութեան զօրութեամբ՝ իրաւունք ունէր կատարելու ինչ որ պիտի կատարէր

«Արքիար Գաւառն մը չէ՛»

Արք քանի որ ամբաստանողք հրապարակային վիճարանութիւններով կարող չեղան հաստատել իրենց ըսածները և պատույ ատենանի մը կազմութիւնն չընդունեցին, ալ ամօթ չէ՞ պառաւական բանբասանքներով մութ անկիւններու մէջ տգեղ ամբաստանութիւններ ընել որք ցարդ զրպարտութիւն նըկատուելէ անդին չանցան:

Լսող

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Նուպար փաշայի հարստութեան մասին Տէյլի Թիլէկրաֆի մէջ հետեւեալ նամակը հրատարակուած էր, զոր մենք Նոր Կեանքէն կը քաղենք:

«Վերջերս թէ՛ Անգլիա և թէ՛ ուրիշ երկիրներ շատ մը սխալ տեսակութիւններ հրատարակուեցան հանգուցեալ Նուպար փաշայի թուրքական հարստութեան մասին:

Իբր հանգուցեալ պիտական մարդուն մէկ վաղեմի և մտերիմ բարեկամը, իր ընտանիքին կողմէ արտօնեալ եւ յայտարարելու թէ ու է ճշմարտութիւն չի կայ պարտաւոր մը զրոյցներուն մէջ՝ որոնց համեմատ Նուպար փաշա իբր թէ անհազիւ հարստութիւն մը գիշած էր և իբր թէ մեծամեծ կը տակնիւ ըրած է:

Ճշմարտութիւնը սա է թէ Նուպար փաշա անկողակ մեծաւ, և գրաւոր կամ բերանացի՝ ու եւ նըւէր չը թողուց: Մեծած պահանջ իր ամբողջ անձնական հարստութիւնը — առանց հաշուելու Տիլին

Նուպարի անձնական հարստութիւնը, որ իր ամբողջ հարստութեանէն աւելի նուազ էր — 150,000 ոսկի հաշուուած է, էվէլ էվէլօք: Յիշեալ հարստութիւնը կը բաղկանար Եգիպտոսի հողերէ, Գաւառի ջրի լիկերութեան բաժնէ, թղթերէ և Գաւառի ու Բարիզ ունեցած ընտանեակներէն:

Մէկ քանի տարի առաջ Նուպար փաշա մտերմօրէն ըսաւ ինծի իր այն ատենուան եկամուտին քանակութիւնը: Իր ինծի ըրած յայտնութիւնը կարելի եղածին չափ մօտաւորապէս կը համապատասխանէ եկամուտին որ կարելի է սպասել յիշեալ կերպով գործածուած այսքան գրամագլխէ մը»:

ԷՏՈՒՆԸՐՏ ՏԱՅՍԻ

ԼՐԱՔԱՂ

Սօփիանէ մեկ կը գրեն թէ տեղւոյն զաղթական երիտասարդներէն 13 հոգի դպրաց դաս մը կազմած են ընդ դպրատանութեամբ Տիար Զակար Երեւանեանի:

— Սերպիոյ Նիշ քաղաքէն եւս մեկ կիւմյանքն թէ քանի մը հայ պանդուխտներ՝ Հայաստանի սովեւոյց ինպատակ, իրենց մէջ հանգանակութիւն ընելով, գոյացած 260 ֆրանքը Պատրիարքարան ղրկած են:

— Ռուստուգէն Հայ Բողոքականաց պատուելի Տիար Գրիգոր Գեորգեանցի ստորագրութիւնը կրող ձեռագիր կոչ մը մեկ ղրկուած է, որով Պատուելին տեղւոյն Աւետարականաց կողմէ հրաւեր կը կար:

Ժրագրուած ընկերութիւնը՝ գիւնց Պ. Շահազիզին՝ առաջարկելով, որ վերոյիշեալ դուռը յանձնէ Բարեգործական Ընկերութեան, մի եւ նոյն նպատակին ծառայելու պայմանով՝ փոխանակ սպասելու, որ առանձին նոր ընկերութիւն մը հիմնուի: — Պ. Շահազիզ պատասխանեց խորհուրդին, թէ ինք իր կողմէն՝ սկզբունքով կընդունէր առաջարկութիւնը, բայց մի եւ նոյն ժամանակ բարոյական պարտք կը համարէր տարի մը եւս սպասել, որ գուցէ յաջողի Մոսկուայի մէջ հաստատել մտադրուած ձեւով նոր ընկերութիւն մը: — Սակայն այս մի տարին ալ պարզապէս նախկին չորս տարինքու թիւն աւելցնելու պիտի ծառայէր, ուստի վերջապէս, Պ. Շահազիզ համաձայնելով, որ այլ եւս աւելորդ էր յետաձգել այս խնդիրը 1898 Փետրվարի 10ին գրած նամակով վերջնականապէս կը յայտնէր թէ ինք համաձայն էր կատարելապէս և պատրաստ էր՝ ժողովուած գումարը դնել Ընկերութեան կարգադրութեան տակ: Այս հաստատական պատասխանի վրայ՝ խորհուրդն անմիջապէս բանակցութեան մը տաւ Պ. Շահազիզին հետ և Մարտ ամսին՝ արդէն որոշուած էին երկուստեք, գումարի յանձնան և գործադրութեան բոլոր պայմաններն, որոնք հետեւեալներն են.

1. Պ. Սմբատ Շահազիզին ստացուելիք (այժմ ստացուած) յոբելյանական գումարը, նոյնպէս և Եվթէ ապագային նոյն նպատակով նոր գումարներ ալ

ստացուին, պիտի կազմեն անձեռնմխելի գումար՝ Բարեգ. Ընկերութեան հրապարակական տակ:

2. Վերոյիշեալ՝ անձեռնմխելի գումարին ստիպելով՝ տարէ տարի պիտի բաժնուի հայ կարօտ գրագէտներուն, ըստ հայեցողութեան և որոշման Բարեգ. Ընկերութեան խորհուրդին՝ ի Ծիփղիս, որ այս մասին կանխապէս պիտի խորհրդակցի ձեռնհաս անձանց հետ:

3. Ամէն տարւոյ վերջը՝ խորհուրդը պիտի հրատարակէ թէ՛ անձեռնմխելի գումարին և թէ՛ նպատաներուն գործածութեան հաշիւը:

4. Եթէ երբ եւ իցէ «կողմասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը, զաղարի կամ խափառուի, յիշեալ մայր գումարը՝ Ընկերութեան Կանոնադրութեան 50րդ, յօդուածին համաձայն պիտի յանձնուի Ծիփղիս Ներսիսեան զբարանցին կամ ազգային ումիշ հաստատութիւններէն մէկուն, այնտեղ ալ իր սկզբնական յատուկ նպատակին ծառայելու պայմանով:

Այս համաձայն պայմանագիրը փոխադարձ հաւանութիւն գտնելէն հետք, Պ. Շահազիզ ուղարկեց ի Ծիփղիս՝ նոյն տարւոյ այսինքն 1898ի Մարտի 10ին իր քովը գտնուած յոբելյանական գումարը, որ ստիպուով միասին հասել էր արդէն 7949 ռուբլի: Բանաստեղծն իր կողմէն աւելցուցիւ էր 51 ռուբլի, և այս կերպով՝ Բարեգ. Ընկերութիւնն իրրեւ հիմնական գրամագլխի կը ստանար 8 հազար ռուբլի: Ասկից զատ յարգելի Պ.

Դայ հասարակութեան, որ յառաջիկայ կիրակէ Ժողովարան հաւաքուին և իրենց կամաւոր նուէրներով մասնակցին Հայաստանի սովեակներուն ինպատակ ըլլալիք հանգանակութեան, որուն պիտի մասնակցին եղեր նաեւ Պուլկար բողոքականները:

— Զէյթունի ինպատակ Ամերիկայի մէջ տեղի ունեցած հանգանակութիւններէն մինչեւ ցարդ ընդհանուր դանձապետին հասած դրամաց գումարն է 1442.68 տոլար: Այս գումարն 250 անգլ. ոսկի ղրկուած է Կ. Պոլսոյ դեսպանին, որ այդ գումարը Հալէպի հիւպատոսին ղրկելով յանձնարած է Զէյթունի կարօտեալներուն բաշխել:

— Ճարտարապետ Տ. Թորոս Թորոմանեան ամբողջ Պուլկարի մէջ իր արհեստը ի գործ դնելու արտօնութիւն ստացած է Սօփիայի կառավարութիւնէն: Այս պաշտօնական արտօնութիւնը ծանուցուած է 55 թիւ «բրիգադ»ով, որ հրատարակուած է կառավարութեան յունվար 14 թուակիր պաշտօնական թերթին մէջ: Բաց աստի, Պուլկ. Նախարարութիւնը մարտ 23 թիւ հրամանագրով կ'արտօնէ յիշեալ հայազգի ճարտարապետն ստանձնելու պիտական ամէն կարգի պատկանող շինութիւններ և մասնակցելու պիտական շինութեանց առթիւ պաշտօնապէս կատարուած նուազութիւններու վառնայի թաղապետութիւնն ալ վկայականով մը կը հաստատէ Տիար Թ. Թորոմանեանի պատուաւոր գործառնութիւնները:

Ուրախ ենք որ օտարներէ այս կերպով կը գնահատուին մեր ար.

Շահազիզը՝ նկատելով, որ տարի մը ի գուր մնացիւ է այս գումարը, բարեխղճութեամբ հարկ համարել էր ուղարկել նաեւ իր կողմէն, մի տարւոյ՝ այսինքն 1897ի տոկոսը՝ 350 ռուբլի, որ անմիջապէս գործադրութեան պիտի յատկացուէր:

Գործն այսպէս կարգադրելէն վերջ կը մնար որոշել թէ ինչ անուն պէտք էր տալ այն նպատամատոյց անձեռնմխելի գումարին: Բարեգ. Ընկերութիւնն ի պատիւ յոբելյանի՝ որոշել էր կոչել — «Կրակակալական Փոնդ Ս. Շահազիզի» բայց բանաստեղծ-մանկավարժը հրաժարեցաւ այս պատուէն, և յատկապէս խնդրեց, որ անպատճառ պահպանուի իր՝ կանխապէս յայտնած բաղձանքն եւ անուանուի՝ «Աթոյեան-Նազարեանց Գրակալական Փոնդ» ի յիշատակ Ռուսաստանոյ նորագոյն գրականութեան այս երկու հիմնադիրներուն: — Պ. Շահազիզի բաղձանքը կատարուեցաւ եւ նպատամատոյց գումարը պաշտօնապէս կոչուեցաւ իր առաջարկած ձեւով:

Իրաւամբ երկազրեր էին ոչ սակաւ անձինք, թէ «գրականական Փոնդ»ի գաղափարն ապարդիւն չը պիտի մնայ ռուսահայ հասարակութեան մէջ, եւ իբրեւ այնուհետեւ ուրիշ գումար մը եւս — թէ եւ շատ փոքր — նուէր ստացուած է: Առաջին քայլն առնողը Փոնդի ծովեղբերայն քաղաքին քանի մը հայերն էին, որոնք «Մշակ» լրագրին միջոցաւ ուղարկել էին — 38 ռուբլ. 65 կոպ:

հետաւորները. և այս առթիւ կը շնորհաւորենք Տիար Թ. Թորոմանեանը որ իր ճարտարութեամբ կարճ ժամանակի մը մէջ կրցաւ Պուլկար կառավարութեան գնահատման արժանանալ:

— Բնիկ Ամասիացի Հ. Պ. Մանիսաճեան անուն 23 տարեկան երիտասարդը, բորագրութիւններ իրեն մասնաճիւղ ընտրած ըլլալով, Եւրոպա անցած և Յրանկֆուրտ Մ.ի հանրաժանութ Գլխմշեան հաստատութեան մէջ իր ճիւղը կը կատարելագործէ, ուր կարելի է սորվիլ փորագրութեան ամեն տեսակները, ամենանոր գրութիւններով: Հ. Պ. Մանիսաճեան միակ Հայն է այս հաստատութեան մէջ, ուր անցեալ դեկտեմբերին 28 տ. շակերտաց մէջ մրցում մը կատարուած ըլլալով, առաջին մրցանակը շահած է Մանիսաճեան: Այս առթիւ բրոֆ. Գլխմշ. հրապարակախօսութեան մը ատեն 160 եւրոպացի ուշակերտաց մէջ անթերի հռչակած է այդ միակ հայը:

Ա. Զ. Դ.

Չմշկածի Մամսա գիւղացի Տիար Պետրոս Աճէմեան իր գիւղի Ժողովուրդէն և Թաղ. խորհուրդէն տեղւոյն քահանայ ընտրուած ըլլալով, այժմ իր հայրենակիցներէն կը փնտռուի, որք զինքը հայրենիք պիտի ղրկեն ամէն տեսակ դիւրութիւն ընծայելով: Ուստի յիշեալ քահանայուն հասցէն ով որ գիտէ թող հաճի իմացնել խմբագրութեանս:

«Փոնդն» արդէն սկսած է գործել: Բարեգ. Ընկերութիւնն անցեալ 1898 տարին ծախսեց 350 ռուբլին, այն, որ Պ. Շահազիզն էր ուղարկել իբրեւ սուկոս 1897ի: Իսկ այս տարի Բարեգ. Ընկերութեան նախահաշուին համաձայն մուտք կը սպասուի:

1898ի տոկոսիք ըրլ.	321.96
«890ի » »	500.

»	821.96
---	--------

Ուսկից պիտի հանուի պետական տուրք:	25. —
-----------------------------------	-------

Որով կը մնայ գործադ.	796.96
----------------------	--------

Այս գումարը մեծ չէ անշուշտ՝ ի նրկատի ունենալով այն ընդհանուր կատարութիւնն, որ կը տիրէ գրագէտներուն շրջանին մէջ. բայց եթէ անոնց մէջ 2ին կամ 3ին ալ, մասնաւոր ընտանիքով ծանրաբեռնուածներուն՝ զբոսական օգնութիւն հասցնէ, զարձեալ զգալի օգուտ տուած կը լինի:

Որչափ մեղ յայտնի է, «Աթոյեան-Նազարեանց» Փոնդը՝ մեր մէջ միակ հասարակական նպատամատոյց գումարն է, որ նիւթականապէս կ'օգնէ զբոսող գաղափարներ, առանց փոխադրաձաքար՝ գրական աշխատութիւն կամ այլ փոխարինութիւն պահանջելու:

Կ. ՏԻՒՐԵԱՆ

Отговорникъ Ю. Н. Пекаревъ
Печатница «Взаимность» — Варш.